ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

29.06.2021թ. թվականին կնքված N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/64-2 գնման պայմանագրի

ք. Երևան «27» 10 2021թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի ժ/պ՝ Գ. Ավետիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՆՈՐԱԿ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Հ. Կատվալյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 29.06.2021թ. կնքված N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/64-2 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5 և 8.15 կետերը և հաշվի առնելով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման պահանջը, նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված ապրանքի ձեռքբերման համար հատկացված 14086050 (տասնչորս միլիոն ութսունվեց հազար հիսուն) ՀՀ դրամ շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին.

1. Հաստատել Պայմանագրի գնման ժամանակացույցը ըստ սույն համաձայնագրի Հավելված 1-ի:
2. Հաստատել Պայմանագրի վճարման ժամանակացույցը ըստ սույն համաձայնագրի Հավելված 2-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 և 2 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78

«Կոնվերս բանկ» ՓԲԸ

Հ/Հ 1930000358920100

ՀՎՀՀ 00000911

տնօրենի ժ/պ------------------Գ. Ավետիսյան

/ստորագրություն/

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՆՈՐԱԿ» ՍՊԸ

ՀՀ, Արարատի մարզ, գ. Մխչյան, 25 փողոց թիվ 2

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ՓԲԸ

Հ/Հ 220013330737000

ՀՎՀՀ 04203321

Տնօրեն ----------------Հ. Կատվալյան

/ստորագրություն/

Կ.Տ

*Հավելված N 1*
*«29» հունիսի 2021թ. կնքված*
*N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/64-2 ծածկագրով պայմանագրի*
*«27» 10 2021թ. կնքված*
*թիվ 2 համաձայնագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ* - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

| Չ/հ | Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը*** | Հատկանիշները (տեխնիկական բնութագիր) | Չափման միավորը | Միավոր գինը (ՀՀ դրամ) | Գումար (ՀՀ դրամ) | Ընդհանուր քանակը | Մատակարարման | | |
| | | | | | | | | | Հասցեն | Ենթակա քանակը | Ժամկետը |
| 2 | 44611400 | Մետաղական արկղ (փոքր մեխանիզացիայի արկղ) | ՆՈՐԱԿ ՍՊԸ | Մետաղական արկղ (փոքր մեխանիզացիայի արկղ) Մեկ դռնանի մետաղական արկղ 300*170*150մմ չափսերի, դռնակը ռետինե ներդիրով և փականով: Ներսում մոնտաժված 25Ա մոդուլային եռաֆազ ավտոմատով, դրսից արկղի աջ կողմում մոնտաժված 3 ֆազ 25 Ա ուժային վարդակով, իսկ ձախ կողմից՝ 5Ա միաֆազ արտաքին մոնտաժման վարդակով, լրակազմ: | հատ | 27960 | 14818800 | 530 | ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 և/կամ ՀՀ, ք.Երևան, Արարատյան 87՝ ըստ Պատվիրատուի պահանջի | 530 | 22.07.2021թ. կնքված համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 25 օրացուցային օրվա ընթացքում |
| 8 | 44322200 | Մալուխ բ/լ ԱԱԲ2լգվ(3կվ) 1*400մմ$^2$ | ООО Камкабель АСБл | Մալուխ բ/լ (3.3կվ) АСБл 1*400 մմ2, ալյումինե բազմալար մեկ ջղանի, կապարե պատյանով, զրահապատ, ուժեղացված մեկուսացումով, 3.3 կՎ լարման, 400մմ2 կտրվածքով | մ | 9880 | 14820000 | 1500 | ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 և/կամ ՀՀ, ք.Երևան, Արարատյան 87՝ ըստ Պատվիրատուի պահանջի | 1500 | 22.07.2021թ. կնքված համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 40 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9 | 44322200 | Մալուխ բ/լ (1կվ) ԱՍԲ3*150մմ² | FULGOP GREECEEL ECTRICCA BLE 600/1000<br><br>Fulgor S.A. | Մալուխ բ/լ (1կվ) ALC(F)V-0,8-3*150 մմ2<br>3*150մմ2 ալյումինե եռաջիղ, բազմալար, կապարե պատյանով,ՊՎՔ պլաստիկատե ծածկույթով, բարձր խոնավության միջավայրերի համար, 1 կՎ լարման, 150մմ2 կտրվածքով | մ | 9390.7 | 40380000 | 4300 | ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 և/կամ ՀՀ, ք.Երևան, Արարատյան 87՝ ըստ Պատվիրատու ի պահանջի | 1500 | Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրից 20 օրացուցային օրվա ընթացքում |
| | | | | | | | | | | 2800 | Պայմանագիրը կնքվել է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և այդ դեպքում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի: |

**** Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, անհրաժեշտության դեպքում գործարանային փաթեթավորմամբ: Մատակարարումն ու բեռնափոխադրումը իրականացնում է մատակարարը Պատվիրատուի նշած վայր:***

***Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը: Կպահպանվեն նաև ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները:*

****Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքի արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:*

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ | «ՆՈՐԱԿ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78 | ՀՀ, Արարատի մարզ, գ. Մխչյան, 25 փողոց թիվ 2 |
| «Կոնվերս բանկ» ՓԲԸ | «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 1930000358920100 | Հ/Հ 220013330737000 |
| ՀՎՀՀ 00000911 | ՀՎՀՀ 04203321 |
| տնօրենի ժ/պ_________Գ. Ավետիսյան<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | Տնօրեն _________Հ. Կատվալյան<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |

Հավելված N 2
«29» հունիսի 2021թ. կնքված
N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/64-2 ծածկագրով պայմանագրի
«27» 10 2021թ. կնքված թիվ 2 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը | |
| 2 | 44611400 | Մետաղական արկղ (փոքր մեխանիզացիայի արկղ) | - | - | - | - | - | - | 14818800 | 14818800 | 14818800 | 14818800 | 14818800 | 14818800 | 14818800 | |
| 8 | 44322200 | Մալուխ բ/լ ԱԱԲ2լգվ(3կվ) 1*400մմ² | - | - | - | - | - | - | 14820000 | 14820000 | 14820000 | 14820000 | 14820000 | 14820000 | 14820000 | |
| 9** | 44322200 | Մալուխ բ/լ (1կվ) ԱԱԲ3*150մմ² | - | - | - | - | - | - | - | - | - | 14086050 | 14086050 | 14086050 | 14086050 | |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**տվյալ չափաբաժնով սահմանված գնման առարկայի համար նախատեսված 2800մ-ի համար վճարման ժամանակացույցը լրացվելու և կնքվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս: Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսվելու են «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի հրապարակած փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

**ԳՆՈՐԴ**

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000358920100
ՀՎՀՀ 00000911

տնօրենի ժ/պ________________Գ. Ավետիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՆՈՐԱԿ» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, գ. Մխչյան, 25 փողոց թիվ 2
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 220013330737000
ՀՎՀՀ 04203321

Տնօրեն________________Հ. Կատվալյան
/ստորագրություն/
Կ.Տ